

2017
-
2019



ՏՈԼՆ-ԻՆՏԵՐՆԱՏՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԶԵԿՈՒՅՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՊԵՏԵՄԲԵՐ • 2019

2017

-

2019

ԶԵԿՈՒՅՑ

3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

4-5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

6-15

ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

16

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԻ-ԵՐԻ ՀԵՏ

17-19

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

20-21

ՏԵՂԱԶՆՆՈՒՄ-ԴԻՏԱՐԿՈՒՄ

22-29

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

30-32

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

33-66

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

67

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանում գործող տուն-ինտերնատները համարվում են կիսափակ հաստատություններ, որոնց մուտքը որոշակիորեն սահամանփակված է քաղաքացիների համար, իսկ ազատ մուտք, որպես այդպիսին չկա: Տուն-ինտերնատներն ունեն հստակ ֆիքսված տեսակցությունների օրեր և ժամեր՝ տարեցների հարազատների այցելությունները կազմակերպելու համար: Քաղաքացիական հասարակության, լրագրողական հանրության կողմից շատ քիչ է ուսումնասիրվել տուն-ինտերնատների գործունեությունն ու դրա համաչափության ու օրինաչափության սկզբունքի համապատասխանությունը: Վերջին տարիների ընթացքում չեն իրականացվել այնպիսի մոնիթորինգային նախագծեր, որոնք հորիզոնական հարթության վրա կդնեն տուն-ինտերնատների ֆինանսանյութական և բովանդակային աշխատանքի որակն ի համեմատություն օրենսդրական դաշտում առկա կարգավորումների: Հետազոտությունների և ուսումնասիրությունների բացակայության պայմաններում անորոշ են տուն-ինտերնատներում առկա խնդիրները, որոնք ծառայել են, ինչպես շահառուների (տարեցների), այնպես էլ այդ հաստատություններում աշխատողների համար՝ սնունդի կազմակերպումը, հագուստի տրամադրումը, սանիտարահիգիենիկ պայմանները, լոգանքի, ճաշի, կեցավայրի հնարավորությունները, ջեռուցման, ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի ապահովումը, անվտանգության նորմերի պահպանումը, անձնակազմի պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներում, ֆինանսական միջոցների գոյացումը, դրանց ծախսերը և բաշխումը, սոցիալական պաշտպանության և ապահովման մեխանիզմները, բժշկական ծառայությունները և այլն: Խնդիրը շատ ավելի բարդանում է մասնավոր տուն-ինտերնատների պարագայում, որոնք որոշակիորեն անկախ են գործում և իրենց հետ հարաբերությունները լիարժեքորեն չեն կարգավորվում օրենքով՝ որպես ոչ պետական հաստատություններ: Խնդրահարույց է նաև փակ հաստատություն համարվող հաստատությունների հարցը, որոնք իրականացնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տուն-ինտերնատի գործառույթ:

Օրենսդրական դաշտում որոշ բարեփոխումներ իրականացնելու, պետական և մասնավոր տուն-ինտերնատների գործունեությունն առավել հաշվետու ու թափանցիկ դարձնելու համար շատ կարևոր է համապարփակ հետազոտության իրականացումը, որն իր մեջ ներառում է տեղական և միջազգային օրենսդրության ուսումնասիրություն, մեղիա նյութերի դիտարկում, ոլորտային վիճակագրությունների դուրսբերում և այլընտրանքային մոդելների համեմատում, որոնց հիման վրա դուրս բերված չափորոշիչների շնորհիվ իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությամբ հնարավոր կլինի առաջարկներով հանդես գալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Կառուցվածքային նկարագրություն՝

Մոնիթորինգը բաղկացած է վեցը հիմնական բաղադրիչներից՝

- Ա Մաս. Տեղական և միջազգային օրենսդրության ուսումնասիրություն, օրենսդրական կարգավորումների համեմատություն, գնահատման չափորոշիչային համակարգի և մեխանիզմների դիտարկում: Իրավական դաշտի վերլուծություն՝ առկա բացերի, թերությունների, Հայաստանի կողմից մարդու իրավունքների ստանձնած պարտավորությունների հետ ընդհանուր հակասությունների դիտարկմամբ:
- Բ Մաս. ՀՀ տուն-ինտերնատներում առկա վիճկի՝ խնդիրների և հնարավորությունների վերաբերյալ ՁԼՄ-ների փաստական անդրադարձների ուսումնասիրություն և վերլուծություն:
- Գ Մաս. ՀՀ օրենսդրական դաշտի կարգավորումների, ինչպես նաև ՁԼՄ-ների կողմից հրապարակված փաստական տվյալների հիման վրա գրավոր հարցումների իրականացում պետական և մասնավոր տուն-ինտերնատներին:
- Դ Մաս. Մոնիթորինգային ստուգայցերի իրականացում պետական և մասնավոր տուն-ինտերնատներ, սոցիալական հարցումների իրականացում շահառուների և աշխատակիցների հետ, տեղագնման աշխատանքներ, դիտարկման և գնահատման իրականացում հետևյալ թեմատիկ բաժիններով՝ ա)Ժողովրդագրություն, բ)Հարաբերություններ և մարդու իրավունքներ, գ)Սենյակներ և գույք, դ)Ընդհանուր տարածք և ենթակառուցվածքներ, ե)Սանիտարահիգիենիկ պայմաններ, զ)Ներքին ծառայություններ, է)Անվտանգություն և ապահով միջավայր, ը)Առողջապահություն և բուժօգնություն, թ)Սնունդ, ժ)Որակական գնահատում և կարիքներ :
- Ե Մաս. Հետազոտական, դաշտային աշխատանքների արդյունքում հավաքագրված տվյալների քանակական և որակական վերլուծություն, վիճակագրության դուրսհանում:
- Զ Մաս. Առկա տվյալների հիման վրա գեկույցի պատրաստում և հրապարակում՝ ներառյալ գերատեսչությանն ուղղված առաջարկների փաթեթով:

Կանոնակարգող դիտարկումներ հետազոտողների համար՝

- Դաշտային աշխատանքների ընթացքում հարցումն անցկացնելիս հարցազրուցավարը հարցերը կարդում է անձամբ: Մատչելիության համար երկրորդ անգամ կրկնելիս այն կարող է փոքր-ինչ պարզաբանվել հարցազրուցավարի կողմից, սակայն, որևէ կերպ ենթակա չէ մեկնաբանության, իմաստային փոփոխությամբ պայմանավորված վերաձևակերպումների:
- Հարցաթերթի վերևում հարցազրուցավարը նշում է իր անունը, ազգանունը և հարցաթերթի հերթական համարը, որը լրացվում է այդ պահին:

- Գուգլ ֆորմայի միջոցով ներկայացվող հարցաթերթերը պահպանվում են տվյալների բազայում և չեն պահանջում հավելյալ գործողություններ և թղթատարություն:
- Հարցերի պատասխանների տարբերակները մի քանիսն են. կան հարցեր, որոնք ակնկալում են ընդամենը մեկ պատասխան և կան հարցեր, որոնք ակնկալում են մի քանի տարբերակներ: Հարցից հետո՝ անմիջապես փակագծերում, այդ մասին հիշատակվում է, օրինակ՝ «նշեք մեկ պատասխան», «նշեք հնարավոր բոլոր պատասխանները», «նշեք մինչև 5 պատասխան»:
- Հարցվողը բոլոր դեպքերում և բոլոր հարցերի պարագայում պետք է ունենա նաև հետևյալ տարբերակները՝ «Չգիտեմ», «Այլ», «Դժվարանում եմ պատասխանել», «Հրաժարվում եմ պատասխանել»:
- Հարցվողը պարտավոր չէ պատասխանել ձեր հարցին կամ կիսվել ձեզ հետ իր կոնտակտային տվյալներով, եթե նա դա չի ուզում: Այդ պարագայում նշվում է «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակը:
- Շատ կարևոր է հարցաթերթը լրացնելիս չմիջամտել պատասխանողին և դրանով չազդել հարցվողի պատասխանի բովանդակության և որակի վրա:
- Ցանկացած անհասկանալի հարցի և/կամ խնդրահարույց իրավիճակի դեպքում հարկավոր է կապ հաստատել ԲՀՀԻ հիմնադրամի աշխատակցի հետ, տեղում պարզել այն:

Սոցիոլոգիական մոտեցումներ՝

Հարցաթերթի կազմման և հետազոտողների կողմից տարվող աշխատանքների կանոնակարգման ու էթիկայի վարքականոնների սահմանման համար հիմք է ընդունվել «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան»-ի կողմից հրապարակված «[ԲՀԿ հետազոտական կարողությունների գործնական զարգացման ուղեցույց](#)»-ում տեղ գտած չափորոշիչները:

Հետազոտության քանակական տվյալները վերլուծվել են IBM-ի կողմից մշակված [IBM SPSS Software](#)² ծրագրի միջոցով, որն ապահովում է արդյունքների ճշգրտությունը, համադրելիությունը, շեղումները և տվյալների մատչելիությունը:

Հարցումների իրականացման գործընթացում հաշվի է առնվել փակ հաստատություններում բաց և փակ տվյալների և շահառուների հարաբերակցությամբ որոշվող ներկայացուցչական թիվը՝ հաշվի առնելով նաև նույն սենյակում բնակվող անձանց քանակի հանգամանքը, որը բոլոր տուն-ինտերնատների տվյալները համեմատական ներկայացնելու համար բերվել է միջին վիճակագրականի:

Հարցումների անցկացման գործընթացում դիտարկվել է պատահականության սկզբունքը, ընտրանքի համար ուսումնասիրվող շահառուների պատահական ընտրության մեխանիզմի հիման վրա:

¹ ՀՌԿԿ Հայաստան, հետազոտությունների ձեռնարկ՝

https://www.crrc.am/hosting/file/_static_content/publications/Research_Skills_for_CSOs.pdf

² IBM SPSS Software - <https://www.ibm.com/de-de/analytics/spss-statistics-software>

Ինչպես շատ այլ երկրներում, Հայաստանի բնակչությունն արագորեն ծերանում է:

Համաձայն միջազգային դասակարգման, տարեցներ են համարվում 65 տարին լրացած անձինք: Հայաստանում ծերության կենսաթոշակի իրավունք ևս ձեռք է բերվում 65 տարին լրանալու դեպքում:³

Տարեց անձանց համամասնությունը երկրում կազմում է 13%, բայց համաձայն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, մինչև 2050թ. 65 տարեկանից բարձր անձանց թիվը նախատեսվում է, որ կհասնի 22-23%-ի, մինչդեռ բնակչության գրեթե մեկ երրորդը կլինի 60 տարեկանից բարձր⁴:

Ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը կազմում է 2.965.269 մարդ: Բնակչության ընդհանուր թվաքանակում 63 տարին լրացած մարդկանց թիվը կազմում է 419.174 մարդ կամ ընդհանուր բնակչության 14,1%-ը⁵:

2019թ-ին կյանքի սպասվելիք միջին տևողությունը Հայաստանում 75,4 տարի է (կանանց համար՝ 78,7, տղամարդկանց համար՝ 71,9): Կյանքի միջին սպասվող տևողության աշխարհի միջին ցուցանիշը 72 է:

Ուշագրավ ցուցանիշ է նաև տարեցների զբաղվածության մակարդակի ցուցանիշը, որը բավական ցածր է՝ աշխատող տարեցների թիվը կազմում է շուրջ 48.000 կամ տարեցների ընդհանուր թվի 11,4 %-ը:

Չնայած մեր երկրում դեռևս չկա տարեցների իրավունքները պաշտպանող միջազգային պայմանագիր, ինչպես նաև չկա գլոբալ մակարդակում վերջիններիս իրավունքներով զբաղվող մասնագիտացված գործակալություն, տարեցների հանդեպ կիրառվող չափորոշիչները ու սկզբունքները կարելի է գտնել մարդու իրավունքների հիմնական միջազգային և տարածաշրջանային համաձայնագրերում⁶: Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 1991թ. 46/91 բանաձևով ընդունված Տարեցների վերաբերյալ ՄԱԿ-ի տասնութ սկզբունքները սահմանում են անկախության, մասնակցության, խնամքի, ինքնակայացման և արժանապատվության առանցքային

³ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված,

«Մոնիթինգի աջակցության մասին» ՀՀ օրենք

⁴ «Գործընկերություն ծերության խնդիրը լուծելու համար», մամուլից հոդված, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, Հայաստան, 7 մարտի 2018թ., տես նաև, «Մեռով պայմանավորված ծնունդների անհավասարակշռությունը Հայաստանում. Ժողովրդագրական ապացույցներ և վերլուծություն», գեկույց, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, Հայաստան, Երևան 2013թ., էջ 20

⁵ Վիճակագրական տվյալներ,

https://www.armstat.am/file/article/demog_2019_2.pdf?fbclid=IwAR1pAjJmjbUGqvDw6sbhKqjKvfi-L9UerIrVFfW_1eNu1XnBOYNafR0RY, էջ 55

⁶ ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Գերագույն Հանձնակատարի Գրասենյակ, Միջազգային չափորոշիչների և սկզբունքներ՝

<https://www.ohchr.org/EN/Issues/OlderPersons/IE/Pages/InternationalStandards.aspx>

թեմաների շուրջ խմբավորված ընդհանուր քաղաքականության կողմնորոշումը⁷: Տարեցների տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ավելի կոնկրետ ուղղորդումները ներկայացված են տարեցների Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (ՏՄԻԿ) ընդհանուր մեկնաբանություն No.6-ում⁸, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով (ՏՄԻՄԴ), որը Հայաստանը վավերացրել է 1993թ.-ին: Աշխատանքի միջազգային կազմակերպությունն ունի տարեցներին վերաբերող երկու կոնվենցիա՝ 1952թ. Սոցիալական ապահովության կոնվենցիան (Նվազագույն չափորոշիչները) (No. 102) և 1967թ. Հաշմանդամության, ծերության և կերակրողին կորցրածների նպաստների կոնվենցիան (No. 128), սակայն դրանցից և ոչ մեկը Հայաստանի կողմից չի վավերացվել: Եվրոպայի խորհրդի ստանդարտների հետ կապված՝ Հայաստանը վավերացրել է Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան 2004թ., բայց չի ընդունել սոցիալական պաշտպանության տարեցների իրավունքի Հոդված 23-ով սահմանված պարտավորությունները: Եվրոպայի խորհրդի տարեցների մարդու իրավունքների այլ չափորոշիչները ներառում են 2014թ. Նախարարների Կոմիտեի առաջարկություն CM/Rec(2014)2-ը, տարեց անձանց մարդու իրավունքների խթանումը⁹ և 2017թ. ԵԽԽՎ 2168 բանաձևը (2017թ.)՝ տարեցների մարդու իրավունքների և նրանց համապարփակ խնամքի մասին¹⁰:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է, որ պետությունը երաշխավորում է տարեց մարդկանց արժանապատիվ կենսապայմանների ապահովումը: Հայաստանի սահմանադրության Հոդված 83-ը սահմանում է, ի թիվս այլոց, տարեցների սոցիալական ապահովության իրավունքը: Հոդված 84-ը սահմանում է, որ տարեցներն ունեն արժանապատիվ գոյության իրավունք:

2017թ. մայիսի 18 կառավարությունն ընդունեց «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը» և դրա իրագործման համար 2017-2021թթ. գործողությունների ծրագիրը¹¹: Ռազմավարության նպատակն է տարեց մարդկանց համար ստեղծել բարենպաստ և առողջ միջավայր՝ ապահովելով նրանց ակտիվ ու արժանապատիվ ծերացման գործընթացը:

Մինչ Ռազմավարության հաստատումը, ՀՀ-ում տարեց անձանց խնդիրների լուծմանն ուղղված այլ ծրագիր է գործել՝ 2015 թվականից իրականացվել է ՀՀ կառավարության կողմից

⁷ Տարեցների վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության Սկզբունքներ՝ <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/olderpersons.aspx>, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 46/91, ընդունված 16 դեկտեմբեր 1991թ.:

⁸ Ընդհանուր մեկնաբանություն No.6՝ https://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=HRI/GEN/1/REV.6:

Տարեցների տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 8 դեկտեմբեր 1995թ., E/1996/22, էջ 34:

⁹ Անդամ պետություններին տարեցների մարդու իրավունքների խթանման Նախարարների կոմիտեի Առաջարկություն CM/Rec(2014)2, 19 փետրվարի 2014թ.՝

<https://www.coe.int/en/web/portal/home?ObjectID=09000016805c649f>:

¹⁰ Տարեցների մարդու իրավունքների և նրանց համապարփակ խնամքի մասին ԵԽԽՎ Բանաձև 2168 (2017)՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=23768&lang=en>:

¹¹ «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը» <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113357>

2014թ. սեպտեմբերի 18-ին հաստատված «Հայաստանի Հանրապետությունում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգին և հայեցակարգի իրականացման 2015-2019 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 39 արձանագրային որոշումը (այսուհետ՝ Հայեցակարգ, Միջոցառումների ծրագիր-ժամանակացույց)¹²: Հայեցակարգի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում ներդնել տարեցների նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որի հիմքում ՀՀ տարեց քաղաքացիների իրական կարիքների լիարժեք ու բազմակողմանի գնահատման և պետության կողմից երաշխավորված նվազագույն ծառայությունների փաթեթի երաշխավորման հետ միասին դրվում է նաև տարեցների համար անհրաժեշտ և ցանկալի սոցիալական այլ (լրացուցիչ) ծառայությունների տրամադրման հնարավորությունների ապահովումը՝ հիմնվելով ծառայություններ ստանալու ցանկություն ունեցող անձանց իրական կարիքների և լրացուցիչ ծառայությունների համար վերջինների փոխհատուցում կատարելու հնարավորությունների գնահատման վրա:

Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում տարեցների սոցիալական պաշտպանությունը նույնացվում է նրանց մատուցվող խնամքի և սոցիալական այլ ծառայությունների հետ: Հանրապետությունում չկա տարեցների իրավունքները պաշտպանող որևէ կառույց, բացի նրանց սոցիալական ծառայություններ տրամադրող մարմիններից:

Տարեցների հիմնահարցերի ոլորտը կանոնակարգվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆունկցիոնալ և ճյուղային ստորաբաժանումների գործառնությունների, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների և նրանց ենթակայությամբ գործող հաստատությունների կողմից իրականացվող համակարգման և ծառայությունների մատուցման գործառնությունների միջոցով:

Այսօրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում է տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող) անձանց շուրջօրյա խնամքի ծառայություն մատուցող 12 հաստատություն (տուն-ինտերնատ, խնամքի կենտրոն, խնամքի տուն), այդ թվում 7-ը՝ ոչ պետական: Բոլոր հաստատություններում միասին բնակվում է շուրջ 1390 մարդ (որից՝ ոչ պետական հաստատություններում 180 մարդ), տնային պայմաններում սպասարկվում է ավելի քան 3800 մարդ, իսկ ցերեկային կենտրոններ հաճախում է շուրջ 2000-ը: Միաժամանակ 150 տարեց ընդգրկված է Լոռու և Շիրակի մարզերի 10 համայնքներում 2018թ. ստեղծված ակտիվ երկարակեցության խմբերում, որոնք ակտիվորեն զբաղվում են համայնքի խնդիրներով, օգնում համայնքի խնամքի կարիք ունեցող տարեցներին: Յուրաքանչյուր խումբ ունի իր լիդերը, իսկ նրանց աշխատանքը համակարգվում է մարզային համակարգողի կողմից:

¹² «Հայաստանի Հանրապետությունում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգին և հայեցակարգի իրականացման 2015-2019 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 39 արձանագրային որոշում
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93327>

Հանրապետությունում բնակվող ավելի քան 7400 տարեց անձ օգտվում է սոցիալական այս կամ այն ծառայությունից¹³:

Պետական ենթակայություն տուն-ինտերնատներում մեկ շահառուի խնամքի մեկ օրվա ծախսը միջինում կազմում է 3700 դրամ, իսկ մեկ շահառուի՝ տնային պայմաններում մեկ օրվա խնամքի ծախսը՝ 390 դրամ:

Հայաստանի Հանրապետությունում ներկա դրությամբ գործում են տարեցներին մատուցվող սոցիալական ծառայությունների հետևյալ տեսակները.

1. Շուրջօրյա խնամքի ծառայություններ, որ մատուցում են բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունները (տուն-ինտերնատները),
2. Ցերեկային խնամք, որ տրամադրվում է սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների կողմից,
3. Տնային խնամք, որ տրամադրում են տնային պայմաններում սոցիալական սպասարկման ու խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպությունները,
4. Ժամանակավոր կացարանով ապահովում՝ իրականացվում է բնակչության որոշակի վայր չունեցող անօթևան անձանց ժամանակավոր կացարանի կողմից,
5. Կացարանով ապահովում որոշակի կարգավիճակ ունեցող անձանց, այդ թվում՝ տարեցներին, սոցիալական բնակարանային ֆոնդի տներում և հատուկխմբերին դասված անձանց համար նախատեսված օթևանում կացարան տրամադրելու միջոցով:

Սույն զեկույցով անդրադարձել ենք Հայաստանում շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցող սոցիալական պաշտպանության հաստատություններին՝ տուն-ինտերնատներին:

Տուն-ինտերնատը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության տեսակ է, որը նախատեսված է միայնակ, խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամների շուրջօրյա խնամքի ապահովման և սոցիալական սպասարկման կազմակերպման համար:

Ե՛վ պետական, և՛ ոչ պետական այդ կառույցները լինում են երկու տեսակի՝ **ընդհանուր տիպի և հատուկ տիպի**:

Ընդհանուր տիպի հաստատություններն առողջ մարդկանց համար են, իսկ **հատուկները**՝ միայն հոգեկան խանգարումներ ունեցողների: Հաշմանդամություն ունեցող անձինք, եթե չունեն հոգեկան առողջության խնդիրներ, նույնպես ապրում են ընդհանուր տիպի տուն-ինտերնատներում:

Ընդհանուր տիպի տուն-ինտերնատներում ապրում են 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձինք և 65 և ավել տարիք ունեցող ծերեր:

Ոչ պետական տուն-ինտերնատներից յուրաքանչյուրում ապրում է մոտավորապես 10-15 մարդ, իսկ պետական տուն-ինտերնատներում՝ սկսած 200-ից մինչև 450 տարեց մարդ է բնակվում:

¹³ Ռազմավարության նախագիծ, <https://www.e-draft.am/projects/2133/justification>

Տուն-ինտերնատ ընդունվելու համար շահառուն պետք է գրավոր դիմի իր բնակության վայրի սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժին՝ ներկայացնելով ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2015 թվականի N 1112-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթերը¹⁴: Դիմումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում սոցիալական աշխատանքի մասնագետը կատարում է տնային այցելություն՝ տվյալ անձի ընտանիքի կարիքների գնահատման (կենսապայմանների ուսումնասիրության) նպատակով և եռօրյա ժամկետում ներկայացնում է եզրակացություն անձին խնամք տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ, որը ներկայացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Այնուհետև անձը հաշվառվում է և համապատասխան տեղ ազատվելու դեպքում, այդ մասին հայտնվում է սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժնին, որը և ուղեգրում է շահառուին:

Տուն-ինտերնատներում խնամվողներին տրամադրվում են նվազագույն կենսապահովման համար անհրաժեշտ բոլոր պարագաներն ու ծառայությունները:

Նախարարության համակարգում գործող տուն-ինտերնատներում տարեցների տրամադրվում են խնամքի և սոցիալական սպասարկման հետևյալ ծառայությունները՝

- 1) ապահովում կացարանով,
- 2) ապահովում անհրաժեշտ կահույքով,
- 3) ապահովում հագուստով, կոշիկներով, անկողնային սպիտակեղենով,
- 4) ապահովում անձնական հիգիենայի պարագաներով,
- 5) սննդապահովում՝ օրական առնվազն երեք անգամ (հատուկ տիպի հաստատությունում՝ 4 անգամ, իսկ հատուկ սննդակարգի կարիք ունեցող հաճախորդներին՝ դիետիկ սնունդ),
- 6) առաջին բժշկական օգնության տրամադրում և առաջնային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում,
- 7) սոցիալ-հոգեբանական օգնության և խորհրդատվության տրամադրում,
- 8) իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- 9) ապահովում պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով,
- 10) անհրաժեշտության դեպքում աջակցություն բժշկասոցիալական փորձաքննության իրականացմանը,
- 11) ուղեգրում հիվանդանոցային բժշկական կազմակերպություն,
- 12) ազատ ժամանցի կազմակերպում, մշակութային և հոգևոր միջոցառումների կազմակերպում,
- 13) աշխատանքային թերապիայի կազմակերպում և իրականացում:

Տուն-ինտերնատում խնամվողին, անհրաժեշտության դեպքում, տեղափոխում են ստացիոնար բուժման համապատասխան բժշկական հաստատություններ:

¹⁴ ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2015 թվականի N 1112-Ն որոշմ,
[file:///C:/Users/USER/AppData/Local/Packages/Microsoft.MicrosoftEdge_8wekyb3d8bbwe/TempState/Downloads/113868%20\(1\).pdf](file:///C:/Users/USER/AppData/Local/Packages/Microsoft.MicrosoftEdge_8wekyb3d8bbwe/TempState/Downloads/113868%20(1).pdf)

ՀՀ կառավարության 31 մայիսի 2007 թվականի N 730-Ն որոշմամբ¹⁵ սահմանված են ձերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները, համաձայն որի՝

- Մեկ սենյակում ապրում են երկուսից չորս հոգով և մեկ շնչին պետք է բաժին ընկնի ոչ պակաս քան 5 քմ:
- Կանայք ապրում են առանձին սենյակներում, տղամարդիկ՝ առանձին, իսկ ամուսնական զույգերն էլ մի սենյակում՝ միասին:
- Յուրաքանչյուր խնամվողի համար պետք է ապահովված լինի առանձին մահճակալ՝ մեկ փոքրիկ պահարանով, մեկ աթոռ, յուրաքանչյուր 4-ը՝ մեկ սեղան և մեկ հանդերձապահարան:
- Տուն-ինտերնատը պետք է ապահովված լինի առանձին խոհանոցով և ճաշարահով՝ այն հաշվարկով, որ խնամվողները կարողանան ճաշել ոչ ավելի, քան 2 հերթով:
- Տուն-ինտերնատը պետք է ունենա մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար դահլիճ՝ տուն-ինտերնատում բնակվողների թվի առնվազն 80 տոկոսի չափով:
- Շենքի ներքին կառուցվածքը պետք է հնարավորություն ընձեռի սայլակներով հաշմանդամների ազատ տեղաշարժմանը:

Տուն-ինտերնատներում խնամվողներին հատկացվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքների նվազագույն չափորոշիչը հաստատված է ՀՀ կառավարության **2007 թվականի մայիսի 31-ի 730-Ն որոշման Հավելված 2-ով**:

Ինչ վերաբերվում է խնամվողի կենսաթոշակ ստանալու իրավունքին, ապա ընդհանուր տիպի տուն-ինտերնատում խնամվողին վճարվում է նշանակված կենսաթոշակի աշխատանքային մասը, որը տնօրինվում է խնամվողի կողմից իր հայեցողությամբ, իսկ այդ կազմակերպությունում ապրող՝ զինվորական կենսաթոշակ ստացողներին՝ նշանակված կենսաթոշակի 50 տոկոսը:

Տուն-ինտերնատում բնակվողի մահվան դեպքում, եթե չունի հարազատներ կամ հրաժարվել են նրանից, պետությունն է ձեռնարկում բոլոր համապատասխան միջոցառումները:

Հանրապետությունում գործում են նաև ոչ պետական տուն-ինտերնատներ, որոնք ՀՀ պետական բյուջեից ստանում են պետական աջակցություն դրամաշնորհների ձևով: Ոչ պետական տուն-ինտերնատներում ծառայությունները տրամադրում են ինչպես անվճար, այնպես էլ՝ համավճարի սկզբունքներով:

Վանաձորի «Հույսի տուն» տարեցների խնամքի հաստատությունը տարեցներին տրամադրում է ինչպես անվճար, այնպես էլ մասնակի վճարովի հիմունքներով ծառայություններ: Ընտրության սկզբունքը պարզ է. նրանք, ովքեր անժառանգ են, խնամվում են ամբողջությամբ անվճար, իսկ նրանք, ովքեր ունեն հարազատներ՝ վճարում

¹⁵ ՀՀ կառավարության 31 մայիսի 2007 թվականի N 730-Ն որոշմի
[file:///C:/Users/USER/AppData/Local/Packages/Microsoft.MicrosoftEdge_8wekyb3d8bbwe/TempState/Downloads/101701%20\(1\).pdf](file:///C:/Users/USER/AppData/Local/Packages/Microsoft.MicrosoftEdge_8wekyb3d8bbwe/TempState/Downloads/101701%20(1).pdf)

են միայն տարեցի խնամքով զբաղվող աշխատողի աշխատավարձի համար անհրաժեշտ գումարը, իսկ մյուս ծախսերը կատարում է հաստատությունը:

Հայ օգնության ֆոնդի Վանաձորի «Տարեցների տուն» հիմնադրամը տարեցների շուրջօրյա խնամքն ապահովելու համար ֆինանսական աջակցություն է ստանում ՀՕՖ-ից, ՀՀ պետական բյուջեից՝ սուբսիդավորման սկզբունքի հիման վրա, ինչպես նաև խնամվողների ընտանիքի անդամների կողմից արված նվիրատվություններից և խնամվողի կենսաթոշակների մասհանումից (նվիրատվության կարգով):

Ելնելով վերոգրյալից, կարելի է փաստել, որ նշված ոչ պետական տուն-ինտերնատները կիրառում են համավճարի սկզբունքը, սակայն նրանց վրա չի տարածվում խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները, ընտրության միասնական մոտեցումները, սահմանված չեն ծառայությունների ֆինանսավորման հնարավոր տարբեր մեխանիզմներ, վճարման միասնական սկզբունքներ, դրույքաչափեր և այլն:

Անդրադառնալով միջազգային փորձին, պետք է փաստենք, որ տարեցներին երկարատև խնամքի ծառայությունների պահանջարկը գնալով աճում է, քանի որ եվրոպական երկրների մեծ մասը ծերացող կամ ծերացած են: Խնամքի ծախսերի հետ միասին աճում են նաև կենսաթոշակի վճարման հետ կապված և բժշկական օգնությանը և բժշկական խնամքին տրամադրվող ծախսերը: Եվրոպական երկրներում երկարատև խնամքի ծառայությունների մեծ մասը տրամադրվում է ոչ ֆորմալ՝ խնամողների կողմից, սակայն ֆորմալ ծառայություններ նույնպես տրամադրվում են՝ տուն-ինտերնատների, ցերեկային խնամքի և տնային սպասարկման կենտրոնների կողմից: Եվրոպական շատ երկրներում այդ ծառայությունների մեծ մասի ծախսերը հոգում է պետությունը, առնվազն՝ աղքատ բնակչության համար:

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի փորձը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տարեցների սոցիալական ծառայությունների տրամադրման փորձի ուսումնասիրություն է կատարել (ՌԴ և եվրոպական երկրներ) և արդյունքում հանգել է այն եզրակացության, որ «Հայաստանի Հանրապետությունում հիմնականում ընդունելի և կիրառելի է տարեցներին սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում Ռուսաստանի Դաշնության փորձը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու երկրները նույն մշակույթի ու պատմության կրողն են և միասին երկար ճանապարհ են անցել, նույնն է սոցիալ-մշակութային միջավայրը, ինչպես նաև ընդհանրություններ կան սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքում»¹⁶:

Հակիրճ ներկայացվում է մի քանի երկրների տարեցների սոցիալական ծառայությունների տրամադրման փորձը:

¹⁶ Ռազմավարություն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93327>

Գերմանիան ներդրել է պարտադիր սոցիալական ապահովագրության սխեման, որն ընդգրկում է գրեթե ողջ բնակչությունը: Բնակչության համարյա 90 տոկոսը ներգրավված է կուտակային կենսաթոշակի համակարգի (սոցիալական ապահովագրության) մեջ: Բնակչության մնացած մասն էլ ընդգրկված է պարտադիր և կամավոր մասնավոր ապահովագրության սխեմաներում: Սոցիալական ապահովագրության սխեման ունի ազգային ընտրության չափանիշ և իրավունք է ընձեռում անհատին ընտրություն կատարելու տարբեր տիպի ծառայությունների կամ դրամական նպաստների միջև՝ պայմանավորված կախվածության երեք մակարդակներով: Հաշվարկվում է ոչ թե նպաստի չափը, այլ այն, թե որքան է կազմում սոցիալական աջակցության ծախսը, երբ խնամքի արժեքը գերազանցում է նպաստի չափը:

Իսպանական համակարգը առավելագույնս ապակենտրոնացված է և կարող է բնութագրվել որպես «երկարատև խնամքի տարածքային ծառայությունների համակարգ»: Այստեղ շեշտը դրվում է խնամքի ոչ ֆորմալ համակարգի վրա, սակայն աշխատուժի թվաքանակի մեջ կանանց մասնակցության աճով պայմանավորված՝ Իսպանիան ստիպված է լինելու աստճանաբար հենվել խնամքի ֆորմալ համակարգի վրա: Հանրային ֆինանսավորմամբ երկարատև խնամքի հասանելիությունը հենվում է կարիքների և ռեսուրսների գնահատման վրա, որոնք տարբերվում են մարզից մարզ: Ծառայությունները խիստ նորմավորված են, քանի որ ցածր է դրանց ֆինանսական ապահովվածության մակարդակը:

Իտալիայում տարեցների երկարատև խնամքն ունի աջակցության երեք աղբյուրներ՝ համայնքային խնամք, ինստիտուցիոնալ խնամք և դրամական նպաստներ: Երկարատև խնամքը տրամադրվում է պետական և մասնավոր հատվածում առողջապահական ու անհատական սոցիալական խնամք մատուցողների կողմից: Առողջապահական ծառայությունները տրամադրվում են անվճար՝ Ազգային Առողջապահական Ծառայության կողմից, մինչդեռ սոցիալական խնամքը տրամադրվում է ըստ դրա կարիքի աստիճանի: Ազգային և տեղական հարկերն են հանդիսանում ֆինանսավորման գլխավոր աղբյուրները: Իտալական համակարգի ուշագրավ առանձնահատկություններից մեկն այն է, որ այն հենվում է տնային խնամք տրամադրող մասնավոր անձանց վրա, որոնք մեծամասամբ ձեռք են բերվում սովերային տնտեսությունից:

Միացյալ Թագավորությունում, ինչպես և Իսպանիայում ու Իտալիայում, առողջապահական ծառայությունները Ազգային Առողջապահական Ծառայության վարչական ղեկավարման ներքո են, իսկ սոցիալական խնամքի ծառայությունները կազմակերպվում են տեղական իշխանությունների կողմից՝ ըստ դրանց պահանջարկի և կարիքի աստիճանի: ԱՄՏ ներկայացուցիչները պատասխանատու են իրենց տարածքի բնակչությանը առողջապահական խնամքի ծառայությունների տրամադրման համար: Տեղական իշխանությունները պատասխանատու են բնակչության կարիքների գնահատման, սոցիալական ծառայությունների հասանելիության և ընտրության չափանիշների մշակման ու տրամադրման համար:

Էստոնիայում տարեցին իր տնից դուրս մատուցվող ընդհանուր խնամքի ծառայությունը տեղական մարմնի կողմից կազմակերպված սոցիալական ծառայություն է, որը նպատակ ունի ապահովել անվտանգ միջավայր: Տարեցների երկարատև խնամքի տրամադրման համար պատասխանատվությունը բաժանվում է առողջապահության և բարեկեցության համակարգերի միջև:

Առողջապահության համակարգը ապահովում է ծերանոցում վերականգնողական ծառայությունները, իսկ բուժքույրերի կողմից խնամքի իրականացումը՝ տանը:

Բարեկեցության համակարգը երկարատև խնամք է տրամադրում բարեկեցության հաստատություններում, ցերեկային խնամքի ծառայություններում, տնային/բնակարանային ծառայություններում, ինչպես նաև այլ սոցիալական հաստատություններում:

Ֆինանսավորումը կատարվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և տվյալ հաստատությունում գտնվող անձի ընտանիքի անդամների կողմից, իսկ բարեկեցության հաստատություններն ունեն տարբեր ֆինանսավորման աղբյուրներ:

Այնուամենայնիվ, տնային պայմաններում իրականացվող խնամքը շատ ավելի թանկ է, քան յուրաքանչյուր շահառուի ինստիտուցիոնալ խնամքը: Դրանից ելնելով տարեցների շրջանում տնային խնամքի օգտագործումը մնում է ցածր մակարդակում խնամքի հաստատություններում իրականացվող ծառայություններին համեմատ:

Լատվիայում սոցիալական ծառայությունները կազմակերպվում և մատուցվում են ապակենտրոնացված ձևով: Ազգային պետական կառավարումը պատասխանատու է քաղաքականության և օրենսդրության մշակման համար, բայց տեղական ինքնակառավարման մարմինները մատուցում են ծառայություններ և մշակում տեղական կանոնակարգեր: Ակնկալվում է, որ համայնքապետարանները կապահովեն որակի և սպասարկման մակարդակները համապատասխանեցնելով ազգային օրենսդրությամբ սահմանված նորմերին՝ անկախ աշխարհագրական դիրքից, բնակչության խտությունից կամ մատչելի բյուջեից:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության տակ գտնվող սոցիալական խնամքի հաստատությունների թիվը բավականին կայուն է: Մասնավոր և հասարակական կազմակերպությունների կողմից ղեկավարվող խնամքի հաստատությունների թիվը գնալով մեծանում է: 2017-ից գործում է պետությանն առընթեր 15 սոցիալական խնամքի կենտրոն և 61 սոցիալական խնամքի կենտրոն՝ մեծահասակների համար, որոնք պատկանում են տեղական ինքնակառավարման մարմիններին: Ինչպես նաև 16 սոցիալական խնամքի կենտրոն, որոնք պատկանում են մասնավոր ընկերություններին և 9 կենտրոնները, որոնք ղեկավարվում են հասարակական կազմակերպությունների կողմից: Տարեցի սոցիալական խնամքի ծախսերը կրում է հենց ինքը կամ նրա ընտանիքի անդամը: Հաստատությունում մնալու համար վճարման սխեման հետևյալն է. տարեցի կենսաթոշակի 90%-ը օգտագործվում է հաստատության ծախսերը հոգալու համար, իսկ 10%-ը մնում է այդ անձին՝ ամսական ծախսեր հոգալու համար: Եթե տարեցը դասակարգվում է որպես ցածր եկամուտ ունեցող անձ, սոցիալական ծառայությունները որոշ դեպքերում մատուցվում են անվճար, նրանց փոխարեն վճարները կատարում է տեղական ինքնակառավարման մարմինը: Վճարման անհրաժեշտ մասնաբաժինը հաշվարկելու համար օգտագործվում է հատուկ բանաձև: Գումարի չափը կապված է նվազագույն աշխատավարձի հետ:

Լիտվայի տարեցների խնամքի կենտրոնները հիմնականում գտնվում են ՏԻՄ-երի ենթակայության տակ: Սակայն ՏԻՄ-երի մեծամասնությունը դեռևս չեն կարող առաջարկել մի շարք սոցիալական ծառայություններ, որոնք հնարավորություն կտան տարեց անձին հնարավորինս երկար ապրել տանը: Նման դեպքերում տարեցները ստիպված են լինում տեղ գտնել բնակելի ստացիոնար հիմնարկում: 2014-ին Երկարատև խնամքի կարիք ունեցող տարեցների 47%-ը գտնվում էր հերթում սպասող, որը տևում էր միջինում 6 ամիս:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Լիտվան հետ է մնում եվրոպական շատ այլ երկրներից՝ 65 տարեկանից բարձր մարդկանց բնակելի խնամքի և տնային տնտեսությունների սպասարկման ապահովագրության առումով:

ՏԻՄ-ները շարունակում են մնալ այդ ծառայությունների հիմնական մատակարարները, իսկ հասարակական կազմակերպությունների կամ մասնավոր ծառայություններ մատուցողների ներգրավվածությունը խիստ սահմանափակ է: Ֆինանսավորման աղբյուրներից են Կենտրոնական կառավարության բյուջեն, տեղական բյուջեն և Առողջության ապահովագրության հիմնադրամը: Երկարատև խնամքի ծառայությունները ֆինանսավորվում են նաև ԵՄ կառուցվածքային ֆոնդերի կողմից: Վճարման անհրաժեշտ մասնաբաժինը հաշվարկելու համար օգտագործվում է այն բանաձևը, որն օգտագործվում է նաև Լատվիայում:

Այսպիսով, Հայաստանում ներդրվող նոր մոդելների ծառայությունների ներդրմանը զուգահեռ պետք է պահպանվի և զարգանա հանրապետությունում գործող տարբեր հաստատությունների կողմից տարեց անձանց անվճար հիմունքներով տրամադրվող ծառայությունների համակարգը: Այս ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից մշակվել է ոլորտը կարգավորող նոր ռազմավարության նախագիծ՝ «Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների ապահինստիտուցիոնալացման և այլընտրանքային, համայնքային ծառայությունների ներդրման և զարգացման ռազմավարության» մասին որոշման նախագիծը¹⁷, որը տեղադրված է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

¹⁷ Ռազմավարության նախագիծ, <https://www.e-draft.am/projects/2133/justification>

Գրավոր հարցումների արդյունքներ՝

Հետազոտության ընթացքում գրավոր հարցումներ են արվել 5 շահառու կազմակերպությունների ղեկավարներին՝ ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Հարցումներն արվել են հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները:

Հետազոտության իրականացման այս փուլում շահառու կազմակերպությունները խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, գրավոր հարցմանը չեն պատասխանել, կամ պատասխանել են սահմանված ժամկետների խախտմամբ, կամ թերի են պատասխանել՝ չանդրադառնալով հարցման բոլոր հարցերին, կամ չեն տրամադրել տեղեկատվությունը՝ առանց սահմանված կարգով մերժում տալով: Որի արդյունքում անհնարին է դարձել կատարել համեմատական վերլուծություն տուն-ինտերնատների շահառուների կողմից տրված տեղեկատվության հետ:

Հ/Հ	Տուն-ինտերնատ	Պատասխան	Խախտումներ
1.	Վանաձորի Տարեցների տուն հիմնադրամ	Պատասխանը լիարժեք է	Օրենքով սահմանված ժամկետի խախտում
2.	Հուլիսի տուն ծերերի հանգստավայր	Պատասխանը թերի է	Օրենքով սահմանված ժամկետի խախտում
3.	Գյումրու տուն-ինտերնատ ՊՈԱԿ	Պատասխանը չի տրվել	Հարցմանը չի պատասխանվել
			Գրավոր տեղեկացվել է պատասխանը եռամսյա ժամկետում տրամադրելու վերաբերյալ
4.	Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ	Պատասխանը չի տրվել	Հարցմանը չի պատասխանվել
5.	Նոր-Նորքի տուն-ինտերնատ	Պատասխանը լիարժեք է	Օրենքով սահմանված ժամկետի խախտում

Հետազոտության դաշտային փուլի հարցումներն իրականացվել են մի քանի բաղադրիչներով, որոնց հիմքում տուն-ինտերնատների մասին օրենքի չափորոշիչներն են, միջազգային փորձն ու դրա հիման վրա մշակված քաղաքականությունները: Ըստ այդմ, հետազոտության այս փուլը բաժանվել է հետևյալ բաղադրիչների՝

- Ա. Ժողովրդագրությունը – այս բաղադրիչը պարտադիր է համարվում ցանկացած հետազոտության համար, որը հնարավորություն է տալիս հասկանալ՝ արդյոք որևէ խնդիր կամ հարց պայմանավորված է թիրախ խմբի գենդերով կամ տարիքով, որքանով են ժողովրդագրական տվյալներն ազդում հետազոտության արդյունքների վրա: Այն թույլ է տալիս հասկանալ նաև որևէ՝ տարիքային կամ սեռային խմբով պայմանավորված խնդիրներն ու հնարավորությունները, որքանով են դրանք տարածվում այդ խմբերի վրա, որոնք են ազդակները և պատճառները:
- Բ. Հարաբերություններ և մարդու իրավունքներ – այս բաղադրիչում դիտարկվել է տուն-ինտերնատի շահառուների հարաբերությունները տուն-ինտերնատի աշխատակիցների և մյուս շահառուների հետ: Մարդու իրավունքների համատեքստում դիտարկվել է շահառուների տեղափոխությունը սենյակից սենյակ, բռնության դեպքերը, ձևերն ու պարբերականությունները կախված դրա արտահայտման ձևերից: Այս բաղադրիչում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կոնֆլիկտներն ու դրանց կարգավորման մեխանիզմները, խտարականության և կամայական ընտրությամբ դրսևորվող մոտեցումները, ընտրողաբար արտոնությունների ցուցաբերումը, պատժամիջոցների տեսակները, կիրառման ձևերն ու սոցիալական արդարության զգացողությունը:
- Գ. Սենյակներ և գույք – այս բաղադրիչում դիտարկվում է սենյակների հրամարեցվածությունը շահառուների համար, որքանով են դրանք համալրված համապատասխան գույքով և տեխնիկայով, արդյոք համապատասխանում են օրենսդրական չափորոշիչների հետ: Ընդորում, այս բաղադրիչը դիտարկվել է դաշտային աշխատանքների երկու փուլերում՝ և՛ հարցազրույցների ժամանակ, և՛ դիտարկման-տեղազննման ժամանակ: Այս բաղադրիչում իրենց կարևոր տեղն ունեն նաև սենյակներում ենթակառուցվածքների բավարար արտահայտումը. բավարար լուսավորության ապահովում, ջեռուցման ձև, հասնելիություն ջրին և այլն: Ընդորում, այս բաղադրիչի ուսումնասիրությունը իրականացվել է երկու փուլերով՝ և՛ հարցումների ժամանակ, և՛ դիտարկման-տեղազննման աշխատանքներն իրականացնելիս, որտեղ հաշվի է առնվել հետազոտողի կողմից ֆիքսած դե ֆակտո տվյալները:
- Դ. Ընդհանուր տարածք և ենթակառուցվածքներ – այս բաղադրիչում դիտարկվել է տուն-ինտերնատների շենքային պայմաններն ու հարմարեցվածությունը ինչպես բոլորին, այնպես էլ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: Այստեղ դիտարկվել են շենքի ենթակառուցվածքների աշխատանքի որակը, ձևը և արդյունավետությունը: Այս համատեքստում դիտարկվել է շենքում բնական լուսավորության և գիշերային ժամերին ապահովվող լուսավորության պայմանները, ջրի հասանելիությունը

շահառուներին, տաք և սառը ջրի առկայությունը, ջեռուցման ձևն ու արդյունավետությունը, կոյուղատար համակարգի աշխատանքն ու ջրահեռացումը, պատուհանների դիրքն ու հատակի հարամարեցվածությունը ազատ և անխոչընդոտ տեղաշարժման համար:

- Ե. Մանիտարահիգենիկ պայմաններ – այս բաղադրիչում դիտարկվել է շենքի ընդահնուր մաքրությունն ու մաքրման աշխատանքները, առանձին սենյակների ընդահնուր մաքրությունն ու մաքրման աշխատանքները, հագուստների լվացման կարգն ու մոտեցումը, սպիտակեղենի փոխարինման և լվացման կարգը, սնունդի ընդունման կարգը, լվացվելու և լողանալու հնարավորությունները, տաք և սառը ջրի հնարավորությունները և այլն: Այս բաղադրիչում հաշվի է առնվել նաև զուգարանների և լվացարանների կահավորվածությունը:
- Զ. Ներքին ծառայություններ – այս բաղադրիչում դիտարկվել է տուն-ինտերնատի կողմից տուն-ինտերնատի շահառուներին տրամադրվող ներքին ծառայությունները, դրանց կարևորությունն ու արդյունավետությունը: Այս բաղադրիչում, հիմնականում դիտարկվել է բժշկի, հոգեբանի, սոցիալական աշխատողի, գրադարանավարի կողմից մատուցված ծառայություններն ու որակը: Դիտարկման մեջ է ներառվել նաև ծառայությունների մատուցման լիարժեքությունը, համաչափությունը, ծառայության մատուցման վճարովի կամ անվճար լինելու հանգամանքը և շահառուների բավարարվածությունն ու կարիքներին համապատասխան աջակցություն ստանալը:
- Է. Անվտանգություն և ապահով միջավայր – այս բաղադրիչում դիտարկվել է տուն-ինտերնատների շենքային պայմաններն ու անվտանգության ապահովման մեխանիզմները՝ որքանով են շենքերն ապահովված հակահրդեհային համակարգերով, արդյոք անձանակագմը տեղյակ է արտակարգ իրավիճակներում իրենց գործողությունների մասին, երբ են հրահանգավորվել, արդյոք շենքերում կան կրակմարիչներ և դրանք հասանելի են շահառուներին: Այս բաղադրիչում հաշվի է առնվել նաև որոշ ենթակառուցվածքների շարքից դուրս գալու դեպքում տուն-ինտերնատի կողմից լրացուցիչ ապահովումների և հավելյալ միջոցների ներդրման հարցը, օրինակ՝ հոսանքազրկման պարագայում հավելյալ լուսավորությամբ ապահովելու հնարավորությունները կամ ջրամատակարարման վթարի դեպքում հավելյալ ջրային ռեսուրսների ներդրումը, դրանց բաշխումն ու բավարար քանակը:
- Ը. Առողջապահություն և բուժօգնություն – այս բաղադրիչում դիտարկվել է տուն-ինտերնատների շահառուների առողջական վիճակը, առողջական խնդիրներ ունենաու դեպքում բժշկին դիմելու և համապատասխան օգնություն ստանալու կարգը: Հաշվի է առնվել նաև, թե ինչ սկբունքով է իրականացվում բուժօգնումն ու բուժումը, արդյոք շահառուները կատարում են որոշակի վճարներ, թե ոչ, որտեղից են ձեռքբերում դեղամիջոցները, ինչպես է կատարվում դրանց վճարման կարգը, հիմնականում ինչ տեսակի հիվանդություններ են տարածված, գիշերային ժամերին իրականացվող վերահսկման/հերթապահության գործընթացում ներառված են բժիշկ/բժշկի օգնականներ, թե ոչ:
- Թ. Մանրային ապահովում – այս բաղադրիչում դիտարկվել է սննդի ընդունման կարգը, անհատական սննդակարգի ապահովումը կախված շահառու կարիքներից, սնունդի տրամադրման պարբերականությունը, չափը, բազմազանությունն ու կալորիականությունը՝ հագեցվածության ապահովման տեսանկյունից: Այս

բաղադրիչում դիտարկվել է նաև սննդի ընդունման գործընթացում ապահովվող սանիտարահիգիենիկ պայմանները, ճաշարաններում լվացվելու հնարավորությունը, սպասքի մաքրությունը և սննդային թունավորման դեպքերը:

- Ժ. Որակական գնահատում և կարիքներ – այս բաղադրիչում դիտարկվել է շահառուների կողմից հետազոտության ընթացքում բարձրաձայնած հարցերը, խնդիրները և հնարավորությունները, խնդիրների լուծման իրենց առաջարկները, ընդհանուր բաղադրիչների դրական և բացասական գնահատումներն ու հետադարձ կապը:

Վիճակագրական տվյալներն ըստ տուն-ինտերնատների տեղագնման

Տեղագնումն անցկացնելիս հաշվի են առնվել օրենսդրական սահմանումներով և չափաքանակներով կարագավորվող չափորոշիչները:

- Հարցման գոտիների նիշավորում՝
- Վանաձոր/ Տարեցնետի տուն – V1
- Վանաձոր/ Հույսի տուն – V2
- Գյումրու տուն-ինտերնատ – G1
- Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ – Y1
- Նոր-Նորքի տուն-ինտերնատ – Y2

Դիտարկումն իրականացվել է բնակելի սենյակներում և ընդհանուր շենքում: Տեղագնության մոտեցման համաձայն՝ պատահականության սկզբունքով յուրաքանչյուր տուն-ինտերնատում դիտարկվել է մեկ սենյակ և սենյակում առկա գույքը իր քանակով:

Շենքային գույքի ստուգման դեպքում կիրառվել է դրանց առկայության ստուգումը: Առկայության վերաբերյալ կատարվել է համապատասխան նշում՝ «+» (առկա է) «-» (առկա չէ):

Հ/հ	Տեղագնման առարկա	V1	V2	G1	Y1	Y2
		Փաստացի առկա	Փաստացի առկա	Փաստացի առկա	Փաստացի առկա	Փաստացի առկա
Սենյակային գույք (պատահականության սկզբունքով մեկ սենյակի ստուգման)						
1.	Բնակելի սենյակների քանակ	25	20	36	96	100
2.	Աթոռներ	2	2	2	2	2
3.	Սեղաններ	1	-	1	1	2
4.	Մահճակալ	2	5	4	2	2
5.	Փոքրիկ պահարան	2	5	3	2	2
6.	Հանդերձապահարան	2	1	1	2	1

Հ/հ	Տեղագնման առարկա	V+	V2	G+	Y+	Y2
		Փաստացի արկա	Փաստացի արկա	Փաստացի արկա	Փաստացի արկա	Փաստացի արկա
Ընդհանուր շենքային գույք (առկայության ստուգում)						
7.	Ճաշարահ	+	+	+	+	+
8.	Ճաշացանկ	+	+	+	+	+
9.	Խոհանոց	+	+	+	+	+
10.	Լվացքատուն	+	+	+	+	+
11.	Լվացքի մեքենա (քանակ)	6	1	3	1	1
12.	Մեքենայի հզորություն	6կգ	9կգ	-	50կգ	50կգ
13.	Չորանոց	+	+	+	+	+
14.	Լոգարան	+	+	+	+	+
15.	Զուգարան	+	+	+	+	+
16.	Ցնցուղ	+	+	+	+	+
17.	Հանգստի սենյակ	+	+	+	+	+
18.	Բազմոց	+	+	+	+	+
19.	Բազկաթոռ	+	+	+	+	+
20.	Սեղան	+	+	+	+	+
21.	Սեղանի խաղեր	+	+	+	+	+
22.	Հեռուստացույց	+	+	-	+	+
23.	Դահլիճ	-	+	+	+	+
24.	Թեքահարթակ	+	+	+	+	+
25.	Տարհանման պլան	+	+	+	+	+
26.	Կրակմարիչ	+	+	+	+	+
27.	Ծաղկանոց	+	-	-	-	-
28.	Դաշնամուր	-	+	-	+	-
29.	Վերելակ	-	-	-	+	-
30.	Առանձին բուժկետ	-	-	-	-	+
31.	Նվազարկիչ	+	+	-	-	-
32.	Աղոթատեղի	-	-	-	-	+
33.	Մարզասարք	-	+	-	-	-
34.	Վարսահարդարման սրահ	-	+	-	-	-


Ա. Ժողովրդագրական տվյալներ՝

Հետազոտության դաշտային փուլին մասնակցել են Շիրակի և Լոռու մարզերի և Երևան տուն-ինտերնատների շահառուները: Հարցման մասնակիցների 48%ը եղել են իգական սեռի, իսկ 52%-ը արական սեռի ներկայացուցիչներ: Հարցմանը մասնակցածների 4%-ը եղել է 36-50, 16%-ը՝ 51-60 և 80%-ը՝ թոշակային տարիքի անձիք:

Հարցմանը մասնակցածների սեռային բաշխումը



Հարցմանը մասնակցածների տարիքային բաշխումը



Բ. Մարդու իրավունքներ և հարաբերություններ՝

Հարցմանը մասնակցած շահառուների 8%-ը բնակվել է այնպիսի սենյակներում, որտեղ բնակիչների ընդհանուր թիվը գերազանցել է 4-ը, որը համարվում է «Օերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշուման¹⁸ հավելված 1-ով սահմանված նվազագույն չափորոշիչների ցանկի 1-ին կետի խախտում: Հարցմանը մասնակցածների 84%ը պնդել է, որ գտնվում է լավ հարաբերությունների մեջ իրենց սենյակակիցների հետ, սակայն հարկավոր է նշել, որ հարցվածների 32%-ը ունեցել է տեղափոխություն սենյակից սենյակ՝ մի քանի պատճառներով, որոնցից 8%-ը կախված տուն-ինտերնատի աշխատակիցների հետ ունեցած հարաբերություններով: Այդուհանդերձ, հարցվածների 60%-ը կարծում է, որ սենյակից սենյակ տեղափոխվելու հանգամանքը պայմանավորված է միայն սենյակակիցների հետ վատ հարաբերությունների մեջ լինելու հանգամանքով, իսկ 20%-ը կարծում է, որ այն կախված է շահառուի կարիքներից և առկա անհրաժեշտությունից:


¹⁸«Օերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշում՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101701>

Կոնֆլիկտային իրավիճակներում հարաբերությունների կարգավորման կանոնակարգային որևէ մոտեցում բացակայում է: Տուն-ինտերնատներում նման վեճերը և հարաբերությունների կոնֆլիկտային ընթացքը կամ ավարտը կարգավորվում են այլընտարանքային ճանապարհներով, ինչի կապակցությամբ հարցվածների 24%-ի կարծիքով հարաբերությունների կարգավորում է տեղի է ունենում այլ աշխատակցի միջամտությամբ, 16%-ը՝ վերադասի միջամտության, 8%-ը՝ սեփական միջոցների ներդրման արդյունքում իսկ 32%-ը չի կարողացել պատասխանել այս հարցին:


Բռնությունը տուն-ինտերնատներում դիտարկվել է երկու ուղղություններով՝ բռնությունը շահառուների միջև և բռնությունը շահառուների և տուն-ինտերնատի աշխատակիցների միջև: Ընդ որում, այս համատեքստում դիտարկվել է բռնության արտահայտման ամենատարծված չորսը՝ ձևերը՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, հոգևոր/համոզմունքային:

Բռնության դեպքերի հաճախականությունը տուն-ինտերնատների շահառուների միջև



Հարցվածների 8%-ը ականատես է եղել տուն-ինտերնատի աշխատակցի կողմից շահառուի բռնության, որոնցից 4%-ը դիտարկել է բռնության ֆիզիկական իսկ մյուս 4%-ը՝ հոգեբանական ձևերը: Այստեղ հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հետազոտության ենթարկված բոլոր տուն-ինտերնատներում շահառուների կողմից շահառուների նկատմամբ բռնությանն ականատես լինելու խոստուն թվերին և համատարածության օրինաչափությանը: Շահառուների միջև բռնությանը ականատես են եղել հարցվածների 48%-ը, որոնցից 36%-ը հազվադեպ է այն դիտարկել իսկ 12%-ը՝ հաճախ: Բռնությունը դիտարկողների 56%-ը այն որակել է իբրև ֆիզիկական իսկ 12%-ը հոգեբանական: Սեռական և հոգևոր/համոզմունքային բռնությունների վերաբերյալ չկան որևէ հիշատակումներ և արձանագրումներ:

Տուն-ինտերնատների շահառուների միջև բռնության դեպքերն ըստ տեսակների



Հարցվածների 8%-ը խոսել է տուն-ինտերնատներում առկա խտարականության՝ տարեբարկված մոտեցման դեպքերի վերաբերյալ, որոնցից 12%-ը այն դիտարկել է տուն-ինտերնատի աշխատակիցներից՝ սպասարկող անձնակազմի կողմից: Հարցվողների 8%-ը կարծում է, որ տուն-ինտերնատի շահառուները ենթարկվում են ծաղրի, որոնց 4%-ը այն դիտարկում է տուն-ինտերնատի աշխատակիցների կողմից շահառուների նկատմամբ: Հարցվողների 16%-ը այն կարծիքին է, որ տուն-ինտերնատում կիրառվում է պատժի այն տեսակը, որի ժամանակ շահառուն զրկվում է որևէ բանից (միջոցառումների մասնակցության հնարավորություն, մշակութային կյանք և այլն): Հարցվողների 12%-ը կարծում են, որ կան որոշակի արտոնություններ, որոնք տրվում են միայն կոնկրետ շահառուների: Հարցումները ցույց են տվել, որ մշակութային կյանքը տուն-ինտերնատներում փոքր-ինչ ավելի ակտիվ է: Հարցվածների 72%-ը հաճախորեն մասնակցում է մշակութային միջոցառումների իսկ 28%-ը՝ հազվադեպ: Բոլոր հարցվածները միանշանակ կերպով (100%) ասել են, որ մշակութային միջոցառումներին մասնակցելը չի համարվում պարտադիր: Հարցվածների 12%-ը ասել, որ առհասարակ, չի մասնակցում արտագնա միջոցառումների: Հարցվածների 44%-ը օգտվում է գրադարաններից և գոհ է մատուցված ծառայություններից, սակայն հատկանշական է, որ հարցվածների 4%-ի համար գրադարանային ծառայությունները հասանելի չեն մատչելիության տեսանկյունից: Պարզաբանման արդյունքում ակնհայտ է դարձել, որ գրադարանները բացի հայերեն լեզվով գրականությունից այլ լեզուներով նյութեր չունեն:

Բ. Սենյակներ և գույք՝

Հարցվածների 92%-ի համաձայն տուն-ինտերնատներում շահառուների սենյակները մաքրվում են ամեն օր, ընդորում, ըստ հարցումների արդյունքների սենյակների մաքրման աշխատանքներն իրականացվում են խնամվողների (12%), մաքրուհիների (64%) և սանիտարների (24%) կողմից: Հարցմանը մասնակցած շահառուների 96%-ը «լավ» է գնահատել սենյակների մաքրության աստիճանը: Նույնչափ մարդկանց համար սենյակներում հարմարավետ է տեղաշարժվելը և չկան խոչընդոտներ:


Ընդհանուր հարցվածների 20%-ին չի բավարարում ջեռուցման մակարդակը սենյակներում, ընդորում, ըստ հարցվածների 12%-ի ջեռուցումը սենյակներում իրականացվում է էլեկտրական տաքացուցիչների միջոցով, ինչը համարվում է հրդեհային անվտանգության կանոնների կոպիտ խախտում: Հատկանշական է, որ առանձին դիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ Գյումրու տուն-ինտերնատում հետազոտությանը մասնակցած շահառուների 60%-ը ասել է, որ իրենց սենյակներում ջեռուցումն իրականացվում է էլեկտրական տաքացուցիչների միջոցով: Հետաքրքրական է, որ դեռ 2015 թվականին էլեկտրական տաքացուցիչից գրանցված հրդեհի հետևանքով երկու զոհերի դեպքի¹⁹ հետո տուն-ինտերնատում շարունակում են առանձին սենյակների ջեռուցումն իրականացնել արգելված միջոցներով:

Հարցվածների 20%-ը միևնույն սենյակում բնակվել է անկողնային հիվանդների հետ, ինչը էապես ազդել է իրենց կյանքի որակի վրա՝ պատճառելով հավելյալ անհանգստություններ:

¹⁹ Ազատություն ռադիոկայան - Գյումրիի ծերերի տուն-ինտերնատում հրդեհի հետևանքով երկու կին է զոհվել՝ <https://www.azatutyun.am/a/26794788.html>


